ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՀԱՄՐ

Բազմարդիւն և արժանայիշատակ Սիմէոն Կաթուղիկոսի աշխատասիրած այս պատուական և հետաքրքրական գիրքը ի լոյս ընծայուեցաւ Մայր Աթոռոյս տպարանէն։

Բովանդակութիւնն է հակիրճ Եկեղ. պատմութիւն Հայոց, Էջմիածնի բազում անցից և աղետից նկարագիրը, Սսոյ, Աղթամարի և Գանձասարի՝ ինչպէս նա և Պօլսոյ մի քանի Պատրիարքաց ընթացից վերայ ժամանակակից նշանաւոր տեղեկութիւնք, Էջմիածնի կալուածներ և հրովարտակք և այլք յականէ յանուանէ, ոմանց Վանօրէից, Վիճակաց, և Նուիրական տնօրէնութեանց վերայ ծանօթութիւնք, միանգամայն իւր գործառնութեանց պատմութիւնք։

Առքա բոլորն տեղեկութեան և ուշադրութեան արժանի պարունակութիւնք լինելով, մանաւանդ Սսոյ և Էջմիածնի իրաւասութեան ևլն. նկատմամբ ներքուստ և արտաքուստ յարուած մեքենայութիւնք ներկայ ժամանակիս հետ բաղդատելոյ համար, անհրաժեշտ էր այսպիսի մի ընտիր հնութիւնը հաղորդել Ազգիս։

Գինն է առանց ծախուց ճանապարհի դ. ՚՚՚-էն։

ՁԵՑՆԱԳՐԵԱԼ

ԵՐԴԵՑՈՂՈՒԹԻՒՆՔ ՍՐԲՈՅ ՊԱՏԱՐԱԳԻ

Թէ՛ ծանր (տաղաւար ևլն) և թէ՛ լուր աւուրց համար Ս. Պատարագի երգեցողութիւնք՝ Մեղկիլք, տաղք, և ամեն բան՝ ինչ որ Ս. Պատարագի երգեցողութիւնքը ըստ աւուր պատշաճի կկազմեն՝ բաց ի Ն՛աշու Շ՝արականաց, երկու կերպ (ծանր և յորդոր) ձայնագրեալ տպագրելով ի լոյս ընծայեցաւ։

Սորա մէջ առաւօտեան և երեկոյեան ժամերգութեանց մի քանի կարևոր Երգեր ևս իրրև ի Յաւելուած տպուած են։

Գինն է ՚՚՚ռուբ։